

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4**

ք. Երևան

23.02.2022 թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինսերտիֆիկատ>> ՍՊԸ-ն, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց>>, <<Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Ջանֆիդայի Է. Դաշոյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Արմավիրի N 6 հիմնական դպրոց>> և <<Արտիմետի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 5 հավելվածով (Աղյուսակներ N 1 և N 2) կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 48 300 000 (քառասունութ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որից.

ՀՀ Արմավիրի մարզի <<Կաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության գինը կազմում է 9 360 000 (ինը միլիոն երեք հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ:

ՀՀ Արմավիրի մարզի <<Արագածի Մ. Մելիսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության

խորհրդատվական ծառայության գինը կազմում է 12 660 000 (տասներկու միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

ՀՀ Արմավիրի մարզի <<Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության գինը կազմում է 10 860 000 (տասը միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիրի N 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության գինը կազմում է 9 210 000 (ինը միլիոն երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

ՀՀ Արմավիրի մարզի <<Արտիմետի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության գինը կազմում է 6 210 000 (վեց միլիոն երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4.3 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կատարողին բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման հաշվետվության ներկայացման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂՁԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԴՅՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3, N 3.1, N 4 և N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ



ԿԱՏԱՐՈՂ՝

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կոլյունի 19ա
«Հայքիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150009355815863
ՀՀ ՀՀ 01528652

Տնօրեն՝



[Handwritten signatures in blue ink]

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	գնման առարկայի գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	71351540/522	դրամ	9 360 000	48 300 000	1	ՀՀ Արմավիրի մարզ	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ
	71351540/523		12 660 000		1		
	71351540/524		10 860 000		1		
	71351540/525		9 210 000		1		
	71351540/526		6 210 000		1		

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1	Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ խորհրդատվական ծառայության մատուցում՝ <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն
2	Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը
	Կից ներկայացվող Ծավալաթերթով նախատեսված աշխատանքներ
3	Տեխնիկական առաջադրանք
	Տեխնիկական հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն Հավելված 4-ի
	Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդիրներում ընդգրկված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ՝ ճարտարագետ-շինարարի, ճարտարագետ-էներգետիկի, ճարտարագետ-էլեկտրիկի, ճարտարագետ-հիդրոտեխնիկի կողմից՝ յուրաքանչյուր իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում

	Հսկողական չափազրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, ամենամսյա հաշվետվությունների ներկայացում: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն ոչ ուշ քան շինարարական աշխատանքները սկսելու օրվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա մինչև ամսի 5-ը: Ընդ որում, առանձին տեսակի շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունը մատուցվում է պատասխանատու անձանց՝ համապատասխան որակավորմամբ մասնագետ-հսկիչների կողմից:
	1. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով՝ շինարարական հրապարակում պատասխանատու անձանց անմիջական մասնակցությամբ: 2. Օբյեկտի ինժեներական համակարգերի կառուցման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի հաստատված նախագծով նախատեսված տեխնոլոգիական հաջորդականությանը համապատասխան և տվյալ աշխատանքների համար սահմանված ժամանակահատվածում: 3. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կազմակերպությունը (պատասխանատու- հսկիչը, խորհրդատուն) պետք է սեփական ռեսուրսներով և միջոցներով իրականացնի կառուցվող օբյեկտի կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի) լաբորատոր փորձարկումները և նմուշառումները, ինչպես նաև ապահովի դրանց արդյունքների ներկայացումը Պատվիրատուին՝ ամսական հաշվետվությունների և/կամ շինարարական ակտերի հետ ներկայացվող առանձին հաշվետվությունների տեսքով: – Լաբորատոր փորձարկումների քանակը, ձևերը և մեթոդաբանությունը պետք է իրականացվեն համաձայն պատվիրատուի պահանջի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի: – Նշված փորձարկումները պետք է ապահովեն տվյալ օբյեկտի համար նախատեսված փորձարկման ենթակա աշխատանքների և առանձին տեսակի նյութերի ամբողջ ծավալը: 4. Օբյեկտի ավարտից հետո՝ խորհրդատուն պետք է ներկայացնի շինաշխատանքների ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն և եզրակացություն այն մասին, որ օբյեկտը կառուցվել է ՆՆՓ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում
	Պատվիրատուին ներկայացվող ամսական հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկատվություն կապալառուի /շինարարական կազմակերպության/ շինարարական աշխատանքներ իրականացնելու անկարողության մասին՝ նշելով չաշխատած օրերի քանակը, դրանց պատճառները, եթե այդպիսիք առկա են:
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ

ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար



Ա. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կոլյունի 19ա
«Հայքիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն



Ա. Վարդանյան

Կ.Տ.

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
« » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						
	անվանումը	տեխնիկական բնույթագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ Վճարման թվական /ըստ վճար ման ժամ անա կացո ւյցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և
դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»,
«ԱՐԱԳԱՍԻ Մ. ՄԵԽԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՋԱՆՖԻԴԱՅԻ Է. ԴԱՇՏՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ԱՐՄԱՎԻՐԻ N 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԵՎ «ԱՐՏԻՄԵՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-ՆԵՐԻ ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐԱԿԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Նախագծով նախատեսվում է վերակառուցել Արմավիրի մարզի ք. Արմավիրի N6 հիմնական դպրոցի մարզադահլիճը:

Ըստ նախագծի նախատեսվում է քանդել հին մասնաշենքը և նորը կառուցել մետաղական կոնստրուկցիաներով: Մարզադահլիճը իրենից ներկայացնում է մեկ հարկանի գեաձև շինություն 35x27 մ չափերով: Մարզադահլիճի կոնստրուկցիաները թեթև մետաղական կոնստրուկցիաներից են: Հարկի բարձրությունը 3.3 մ է, իսկ մարզասրահի և հանդիսությունների սրահի բարձրությունը 6 մ: Պատերը երկաթբետոնե շրջանակային կարկասով են: Մարզադահլիճի և հանդիսությունների սրահի տանիքը 120 մմ հաստությամբ սենդվիչ պանելներից են, իսկ պատերինը 100 մմ: Մասնաշենքի համար նախատեսվել է ջերմամեկուսացում և երեսապատում տրավերտինե և բազալտե սալերով, իսկ տանիքի արտաքին ջրահեռացումը կազմակերպվել է ալիկոբոնդով երեսապատված տուփերի միջոցով: Նախատեսվել է արտաքին բարեկարգում, ճանապարհների ասֆալտապատմամբ, բազալտե եզրաքարերի տեղադրումով և կանաչապատմամբ:

Նախագծով նախատեսվում է վերակառուցել Արմավիրի մարզի Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N7 հիմնական դպրոցի մարզադահլիճը:

Ըստ նախագծի նախատեսվում է քանդել հին մասնաշենքը և նորը կառուցել մետաղական կոնստրուկցիաներով: Մարզադահլիճը իրենից ներկայացնում է մեկ հարկանի գեաձև շինություն 35x27 մ չափերով: Մարզադահլիճի կոնստրուկցիաները թեթև մետաղական կոնստրուկցիաներից են: Հարկի բարձրությունը 3.3 մ է, իսկ մարզասրահի և հանդիսությունների սրահի բարձրությունը 6 մ: Պատերը երկաթբետոնե շրջանակային կարկասով են: Մարզադահլիճի և հանդիսությունների սրահի տանիքը 120 մմ հաստությամբ սենդվիչ պանելներից են, իսկ պատերինը 100 մմ: Մասնաշենքի համար նախատեսվել է ջերմամեկուսացում և երեսապատում տրավերտինե և բազալտե սալերով, իսկ տանիքի արտաքին ջրահեռացումը կազմակերպվել է ալիկոբոնդով երեսապատված տուփերի միջոցով: Նախատեսվել է արտաքին բարեկարգում, ճանապարհների ասֆալտապատմամբ, բազալտե եզրաքարերի տեղադրումով և կանաչապատմամբ:

Արմավիրի մարզի Արագած գյուղի Մեխակ Մեխակյանի անվան միջնակարգ դպրոցի շենքը նախագծվել և շահագործման է հանձնվել 1970 -ական թվականներին: Դպրոցը բաղկացած է երեք մասնաշենքերից, որոնք իրար են միանում տաքանցումով: Սպորտի և հանդիսությունների դահլիճները միասին կազմում են մեկ կառույց, որն ունի 18x18 մ առանցքային չափեր: Հանդիսությունների դահլիճի հարկի բարձրությունը 5 մ է, իսկ մարզադահլիճի հարկի բարձրությունը 6 մ է:

Նախագծով նախատեսվում է քանդել դահլիճի մասնաշենքը ինչպես նաև տաք անցումների մի մասը: Փախարները կառուցվում է նոր դահլիճային մասնաշենք, որի մարզադահլիճը 15x24 մ չափերի է, իսկ իսկ հանդիսությունների դահլիճը 12x24 մ է: Մարզադահլիճին կից են հանդերձարանները, իրենց սանհանգույցներով և լոգախցիկներով, մարզչի սենյակը և գույքի պահեստը: Կոնստրուկտիվ առումով այն երկաթբետոնյա սյունահեծանային համակարգով 2 մասնաշենքից կազմված շինություն է: Դահլիճների բարձրությունը 6 մ է, տանիքային ծածկը մետաղական ֆերմայի վրա սենդվիչ պանելներ:

Նախագծով նախատեսվում է վերակառուցել Արմավիրի մարզի Զանֆիդայի Է.Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոցի մարզադահլիճը:

Ըստ նախագծի նախատեսվում է քանդել հին մասնաշենքը և նորը կառուցել մետաղական կոնստրուկցիաներով: Մարզադահլիճը իրենից ներկայացնում է մեկ հարկանի գեաձև շինություն 35x27 մ չափերով: Մարզադահլիճի կոնստրուկցիաները թեթև մետաղական կոնստրուկցիաներից են: Հարկի բարձրությունը 3.3 մ է, իսկ մարզասրահի և հանդիսությունների սրահի բարձրությունը 6 մ: Պատերը երկաթբետոնե շրջանակային կարկասով են: Մարզադահլիճի և հանդիսությունների սրահի տանիքը 120 մմ հաստությամբ սենդվիչ պանելներից են, իսկ պատերինը 100 մմ: Մասնաշենքի համար նախատեսվել է ջերմամեկուսացում և երեսապատում տրավերտինե և բազալտե սալերով, իսկ տանիքի արտաքին ջրահեռացումը կազմակերպվել է ալիկորոնդով երեսապատված տուփերի միջոցով: Նախատեսվել է արտաքին բարեկարգում, ճանապարհների ասֆալտապատմամբ, բազալտե եզրաքարերի տեղադրումով և կանաչապատմամբ:

Դպրոցը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի Չարենցի փողոց թիվ 45 հասցեում: Գոյություն ունեցող դպրոցը 1 հարկանի է: Կառուցվում է մեկ հարկանի մարզադահլիճ 462.3 մ² մակերեսով: Մուտք դեպի շինություն իրականացվում է 10 մ² աստիճանի և թեքահարթակի միջոցով: Նոր շինությունը բաղկացած է սպորտդահլիճից (270 մ²), մարզական պարագաների սենյակից (15.7 մ²), տղաների և աղջիկների համար նախատեսված հանդերձարաններից և սանհանգույցներից (22.7 և 25.1 մ²), հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցից (7.3 մ²), մարզչի սենյակից (8 մ²), օժանդակ սենյակից (4.7 մ²), միջանցքից (31.3 մ²), և նախամուտքից (4.4 մ²):

Մարզադահլիճի կոնստրուկտիվ համակարգը լուծվում է շրջանակային հիմնակմախքով ե/բ բետոնից: Հանդերձարանների հատվածների սյուները հավասարակողմ են 400x400 մմ կտրվածքներով B25 դասի բետոնից: Կրող հեծանները ուղղանկյունաձև են 400 x500 մմ կտրվածքով B25 դասի բետոնից: Ծածկը միաձույլ է 100 մմ հաստությամբ: Տանիքի ծածկի իրականացվում է մետաղական ֆերմաների միջոցով 15.2 մ թռիչքից բաղկացած ուղղանկյուն խողովակներով:

Ստորև ծավալաթերթի աշխատանքների հիմքով շարադրված են տեխնիկական աշխատանքների մեթոդաբանությունը:

1. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ՀԱՆՈՒՅԹ, ՀԱՐԹԵՑՈՒՄ և ՀԵՏԼԻՑՔ)

Այս բաժնում ընդհանուր նկարագրվում են այն հողային աշխատանքները, որոնք կապված են հանույթի, հողային պաստառների հարթեցման կամ հետլիցքի աշխատանքների հետ:

Գրունտը, որպես փոփոխական նյութ շատ զգայուն է խոնավության տատանումների նկատմամբ, և կարիք ունի հատուկ ուշադրության նախագծա-նորմատիվային փաստաթղթերի համապատասխան որակ ստանալու համար: Ըստ դրա գրունտների լաբորատոր փորձարկումները պետք է դառնան հողային աշխատանքների անբաժանելի մաս, որպես ցանկալի որակ ապահովելու երաշխավոր:

Հողային աշխատանքների հետ կապված որակական չափանիշեր ստանալու համար տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել հաստատված հատակագծերը, մասնագրերը և երկրաբանական հաշվետվությունը
- Կատարել նշումներ շին հրապարակում աշխատող շինարարական տեխնիկայի վերաբերյալ
- Լաբորատոր կամ դաշտային փորձարկումների կազմակերպման միջոցով ստուգել հանույթի նախագծային ամենացածր նիշի գրունտների կրողունակությունը
- Լաբորատոր փորձարկումների կազմակերպման միջոցով ստուգել հետլիցքի գրունտների դասկարգումը և նրանց համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերի պահանջներին:
- Ստուգել հետլիցքի կամ հարթեցնող շերտի նյութի որակական համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին, խտությունները և շերտերի հաստությունները (հզորությունները)
- Մասնակցել նմուշառման աշխատանքներին և ստուգել որ հողային պաստառի, հանույթի հետլիցքի կամ պահուստից բերված հետլիցքի գրունտների նմուշները տեղափոխվեն նյութերի փորձարկման լաբորատորիա:

1.1 ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Լաբորատոր փորձարկումները ներառում են.

- Գրունտի նմուշների հատիկաչափական կազմի և այլ հատկությունների ստուգում, ըստ տեղամասի տեխնիկական հսկիչի կամ Պատվիրատուի պահանջով
- Գրունտի օպտիմալ խոնավության և չոր խտության կապի որոշում
- Հետլիցքի նյութի խտացման աստիճանի որոշում

2. ԲԵՏՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երկաթբետոնյա կառուցվածքների բետոնի որակի վրա ազդում են մի շարք գործոններ: Ըստ դրա, որակի հսկողությունը բաժանվում է երկու փուլի.

- Շին հրապարակ բերվող բետոնը ստուգվում ստանդարտ լաբորատոր փորձարկումների միջոցով և ստացված արդյունքները համեմատվում են նախագծային փաստաթղթերի և տեխնիկական մասնագրերի պահանջների հետ

- Բետնացման աշխատանքների պատշաճ իրականացում և բետոնի խնամք

Բետոնային աշխատանքների հետ կապված որակական չափանիշներ ստանալու համար տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և տեխնիկական մասնագրերի համապատասխանելիությունը, նորմատիվային փաստաթղթերի հետ
- Մասնակցել բետոնի կազմի ընտրության աշխատանքներին ըստ անհրաժեշտության

2.1 ՎԻԶՈՒԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Շին հրապարակում որակի տեխնիկական հսկիչը պարտավոր ստուգել.

- Կաղապարների չափերի և ձևերի համապատասխանելիությունը
- Կաղապարների մաքրությունը և խնամքը համապատասխանում են ներկայացվող պահանջներին մինչև բետոնի լցնելը կաղապարների մեջ
- Հսկել շինհրապարակ առաքված բետոնի կոշտությունը
- Բետոնի նմուշառման աշխատանքների համապատասխանելիությունը նորմատիվային փաստաթղթերի պահանջներին

3. ԱՄՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երկաթբետոնե կառուցվածքներում օգտագործվող ամրանի շարունակական կամ պարբերական ստուգումները պետք է հավաստեն մատակարարի արտադրանքի համապատասխանելիությունը նախագծային, նորմատիվային կամ տեխնիկական մասնագրերի պահանջներին: Այս աշխատանքները իրականացվում են որակի հսկիչի (վիզուալ դիտարկումներ) և նյութերի փորձարկման լաբորատորիայի հետ համատեղ:

3.1 ՎԻԶՈՒԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Շին հրապարակում որակի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել շին հրապարակ առաքված ամրանային ձողերի յուրաքանչյուր խմբաքանակի չափերը և դասը ըստ մասնագրերի կամ նախագծի
- Լաբորատոր փորձարկումների միջոցով ստուգել ամրանների համապատասխանելիությունը ըստ արտադրանքի տեխնիկական մասնագրերում նշվող պահանջներին
- Վիզուալ ստուգել շին հրապարակ առաքված ամրանների մակերևույթները
- Կաղապարներում ամրանացանցերի տեղադրման համապատասխանելիությունը նախագծերին և եռակցվող հանգույցները որակը, եթե դրանք առկա են
- Մասնակել նմուշառման աշխատանքներին

4. ՔԱՐԻ ՇԱՐՎԱԾՔ

Ըստ այս տեսակի աշխատանքների բնույթի լաբորատոր փորձարկումները ներառում են.

- Քարի շարվածքների կամ բետոնե աղյուների որակի ստուգում և դրանց համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին
- Լցանյութային կամ կապակցող խառնուրդների նյութերի (ցեմենտ, ավազ, անկեռային ձողեր, խիճ) համապատասխանելիությունը մասնագրերին և այլն:

5. ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ներքին հարդարման աշխատանքները իրենց ծավալով և տեսակով ներկայացված են նախագծային փաստաթղթերում: Այս աշխատանքները իրենց մեջ ներառում են հատակի ցեմենտ-ավազե հարթեցնել շերտերը, պատերի հարդարումը տարբեր տեսակի մածիկներով, գաջի աշխատանքները և այլն:

Այս աշխատանքների իրականացման ընթացքում որակի պատասխանատու տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել աշխատող անձնակազմի որակավորումը
- Ստուգել և անհրաժեշտության դեպքում (նյութերի փորձարկման լաբորատորի ուղարկել)

հարդարման համար նախատեսված նյութերի համապատասխանության սերտիֆիկատները

- Վիզուալ ստուգել հարդարվող մակերևույթների ողորկությունը և հայտնաբերված թերությունների դեպքում տալ համապատասխան ցուցումներ դրանց վերացման համար:

6. ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

Այս աշխատանքները իրականացնելու ընթացքում համապատասխան որակավորում ունեցող որակի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Մասնակցել շին հրապարակ նեմոժված ապրանքների (տարբեր տեսակի խողովակներ և դրանց կցամասեր, օդափոխության համակարգեր, էլեկտրական սարքավորումներ և այլն) հանձնման ընդունման աշխատանքներին

- Ստուգել դրանց համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին և տեխնիկական մասնագրերին

- Ստուգել դրանց մոնտաժման աշխատանքների որակական հատկանիշները
- Թերությունների հայտնաբերման դեպքում տալ համապատասխան ցուցումներ

7. ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այս աշխատանքները իրենցից ներկայացնում են շինության հարակից տարածքում նախատեսված բարեկարգման աշխատանքների անբաժանելի մաս:

Այս տեսակ աշխատանքների իրականացման ընթացքում տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել կատարված աշխատանքի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերի պահանջներին (տեղադրվող ասֆալտի հաստություն, լայնություն, տեխնիկական մասնագրերի պահանջներ)

7.1 ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Մասնակցել լաբորատոր փորձարկումների համար իրականացվող նմուշառման աշխատանքներին
- Մասնակցել ասֆալտաբետոնի կազմի ընտրության լաբորատոր փորձարկումների աշխատանքներին
- Լաբորատոր փորձարկումների տվյալներով ստուգել ասֆալտաբետոնի ծածկի ներքևի շերտերի համապատասխանությունը տեխնիկական մասնագրերի և նախագծային պահանջներին:

8. ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՖԻԿ

Փորձարկումների և հսկողությունների սահմանման գրաֆիկը պետք է կազմվի Պատվիրատուի և ծառայություններ մատուցողի հետ համատեղ, կամ նշվի պայմանագրի հավելածներով կամ այլ ձևերով: Այս փորձարկումների գրաֆիկի կազմումը ուղղակիորեն կապված է շինարարության տևողության և փաստացի աշխատանքների առաջընթացի հետ: Պատվիրատուի ցանկությամբ ծառայություններ մատուցող ընկերությունը փորձարկումների և հսկողության գրաֆիկը կսահմանի ըստ փաստացի աշխատանքների առաջընթացի:

9. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Տվյալ ժամանակահատվածում Կապալառու ընկերության կողմից իրականացված փաստացի աշխատանքների ծավալները ստուգվում են Կապալառու ընկերության ներկայացուցչի (աշղեկ և այլն), որակի տեխ հսկողություն իրականացնող թիմի ներկայացուցչի և ըստ ցանկության պատվիրատուի ներկայացուցչի մասնակցությամբ: Ստուգված ծավալների հիման վրա Կապալառու ընկերությունը կազմում է կատարողակ ակտ, որին պարտադիր կցվում են ծածկված աշխատանքների ակտերը (եթե համապատասխան աշխատանք իրականացվել է), լաբորատոր փորձարկումների արձանագրությունները (եթե տվյալ ժամանակահատվածում իրականացվել են), նյութերի համապատասխանության սերտիֆիկատներ և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Հավաքագրված փաստաթղթերը պահանջված օրինակների քանակով սահմանված ժամանակամիջոցում հանձնվում են պատվիրատուի ներկայացուցչին:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՀԼԻԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԵՐԻ ՊԼԱՆ

Հողային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծառայությունի ծավալ	Ըստ շերտերի
1	2	3	4
Գրունտների հետլիցքի տոփոման աշխատանքների հետ կապված լաբորատոր փորձարկումներ	մ³	1093	20
Կոնստրուկտորական մաս Մասնաշենք 1.1			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծառայությունի ծավալ	Փորձարկումների քանակ (բետոնի համար, յուրաքանչյուր 50 մ³-ի հիմքերի համար, յուրաքանչյուր 20մ³ մյուս կոնստրուկցիաների համար, 4 նմուշ 40 սմ երկարությամբ, ամեն տրամաչափի ամրանի համար, շին հրապարակ առաքված յուրաքանչյուր չափաքանակից
1	2	3	4
Միաձուլյի հիմնային հեծան -2.100 նիշ			
Բետոնե նախապատրաստական շերտ B7,5 բետոնով	մ³	6.6	1
Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	30.20	1
Ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20բետոնով	մ³	32.3	1
Ամրան Փ18 A500c	տ	1.593	1
Ամրան Փ8A240	տ	1.020	1
Ե/բետոնե հատակ -0.05 նիշ			
Ե/բետոնե հատակի իրականացում B12,5բետոնով	մ³	16.9	1
Շշոջանակ Ա,Բ,Գ,Ե, 1,2,3 առանցքով			
Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ³	8.8	1
Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ³	18.4	1
Ամրան Փ18-20 A500c	տ	2.486	2
Ամրան Փ8A240	տ	1.085	1
Ծածկի սալ +3.180 նիշում			
Ե/բետոնե սալի իրականացում B25 բետոնով	մ³	27.9	2
Ամրան Փ10A500c	տ	1.15	1
Ամրան Փ8A500c	տ	0.73	1

Ամրան Φ8A240	տ	0.15	1
Կոնստրուկտորական մաս Մասնաշենք 1.2			
Միաձուլյ հիմնային հեծան -2.100 նիշ			
Բետոնե նախապատրաստական շերտ B7,5 բետոնով	մ³	21	1
Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	58	1
Ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20բետոնով	մ³	106.20	2
Ամրան 18-22ΦA500c	տ	7.60	2
Ամրան Φ8A240	տ	2.90	1
Ե/բետոնե հատակ -0.05 նիշ			
Ե/բետոնե հատակի իրականացում B12,5բետոնով	մ³	63.9	2
Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	5.9	1
Այլ լաբորատոր փորձարկումներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծալաթերթի ծավալ	Փորձարկումների քանակ
Բետոնի ամրության ստուգում չքայքայող առաձգական հետադարձի մեթոդով (Schmidt hammer)	ըստ կոնստրուկցիայի	-	6
Եռակցման կարանների տեսողական զննում	զմ	-	152
Բետոնի ամրության որոշում ե/բ կոնստրուկցիայի հորատված գլանի միջոցով	հատ	-	2
Նախագծի և փաստացի կառույցի էներգոէֆեկտիվության հաշվարկ և սերտիֆիկացման աշխատանքներ	հատ	-	1
Անֆալտբետոնե խառնուրդի ստուգում	շերտ	-	1
Անֆալտբետոնե կեղևների փորձարկում	հատ	-	1

ՀՀ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԱԳԱՑԻ Մ. ՄԵՆԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՅԼԻՃԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԵՐԻ ՊԼԱՆ

Հողային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծալաթերթի ծավալ	Ըստ շերտերի
1	2	3	4
Գրունտերի հետվիջքի տոփոնման աշխատանքների հետ կապված լաբորատոր փորձարկումներ	մ³	1025	19
Կոնստրուկտորական մաս Մասնաշենք 1			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծալաթերթի ծավալ	Փորձարկումների քանակ (բետոնի համար, յուրաքանչյուր 50 մ³ -ի հիմքերի համար, յուրաքանչյուր 20մ³ մյուս կոնստրուկցիաների համար, 4 նմուշ 40 սմ երկարությամբ, ամեն տրամաչափի ամրանի համար, շին հրապարակ առաքված յուրաքանչյուր չափաքանակից
1	2	3	4
Ե/բետոն հիմնային հեծան -1.500 նիշ			
Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	մ³	24.70	1
Բուտաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	49.3	2
Միաձուլյ ե/բ հիմնային հեծանի պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	66.600	2
Ամրան Φ18A500C	տ	5.683	1

Ամրան $\Phi 8A240c$	տ	1.4458	1
Ե/բետոնե միաձուլյ հատակի սալ -1,500 կհ2			
Միաձուլյ ե/բ հատակի սալի պատրաստում B-20 դասի բետոնից	լ ³	36.7	1
Ամրան $\Phi 18A500C$	տ	6.2098	1
Ե/բետոնե միաձուլյ հատակի սալ -0,05 կհ2			
Միաձուլյ ե/բ հատակի պատրաստում B-12,5 դասի բետոնից	լ ³	74.1	2
Ե/բետոնե միաձուլյ ծածկի սալ +3,180 կհ2ում			
Միաձուլյ ե/բետոնե ծածկի սալի պատրաստում B25 դասի բետոնից	լ ³	5.4	1
Ամրան A500C	տ	1.0111	1
Ամրան $\Phi 8A240$	տ	0.0421	1
Ե/բետոնե միաձուլյ շրջանակ Ա,Բ,2,1,4,6,8			
Միաձուլյ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	լ ³	42.3	2
Միաձուլյ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	լ ³	57.08	3
Ամրան A500c	տ	9.8976	1
Ամրան A240	տ	3.7448	1
Կոնստրուկտորական մաս Մասնաշենք 2			
Ե/բետոնե հիմնային հեծան -1,500 կհ2			
Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	լ ³	6	1
Բուտաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	լ ³	19.4	1
Միաձուլյ ե/բ հիմնային հեծանի պատրաստում B-20 դասի բետոնից	լ ³	27.1	2
Ամրան $\Phi 18A500C$	տ	1.3428	1
Ամրան $\Phi 8A240c$	տ	0.8136	1
Ե/բետոնե միաձուլյ հատակի սալ -0,05 կհ2			
Միաձուլյ ե/բ հատակի պատրաստում B-12,5 դասի բետոնից	լ ³	12.2	1
Ե/բետոնե միաձուլյ ծածկի սալ +3,180,4,680 կհ2ում			
Միաձուլյ ե/բետոնե ծածկի սալի պատրաստում B25 դասի բետոնից	լ ³	20.9	1
Ամրան A500C	տ	3.818	1
Ամրան $\Phi 8A240$	տ	0.101	1
Ե/բետոնե միաձուլյ շրջանակ Է,Ը,Թ,3,5,7,2,1			
Միաձուլյ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	լ ³	8.8	1
Միաձուլյ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	լ ³	17.44	1
Ամրան A500c	տ	2.5151	1
Ամրան A240	տ	1.032	1
Կոնստրուկտորական մաս Մասնաշենք 3			
Ե/բետոնե հիմնային հեծան -2 կհ2			
Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	լ ³	2.2	1
Բուտաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	լ ³	8.9	1
Միաձուլյ ե/բ հիմնային հեծանի պատրաստում B-20 դասի բետոնից	լ ³	5.9	1
Ամրան $\Phi 14A500C$	տ	0.259	1
Ամրան $\Phi 8A240c$	տ	0.283	1
Ե/բետոնե միաձուլյ հատակի սալ -0,05 կհ2			
Միաձուլյ ե/բ հատակի պատրաստում B-12,5 դասի բետոնից	լ ³	4.2	1
Ե/բետոնե միաձուլյ շրջանակներ			
Միաձուլյ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	լ ³	2.4	1
Միաձուլյ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	լ ³	6.5	1
Միաձուլյ ե/բետոնե ծածկի սալի պատրաստում B25դասի բետոնից	լ ³	4.9	1
Ամրան $\Phi 18A500c$	տ	0.565	1
Ամրան $\Phi 8A500c$	տ	0.292	1

Ամրան Φ8A240	տ	0.435	1
Այլ լաբորատոր փորձարկումներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծառալաթերթի ծավալ	Փորձարկումների քանակ
Բետոնի ամրության ստուգում չքայքայող առաձգական հետադարձի մեթոդով (Schmidt hammer)	ըստ կոնստրուկցիայի	-	12
Եռակցման կարանների տեսողական զննում	զմ	-	80
Բետոնի ամրության որոշում ե/բ կոնստրուկցիայի հորատված զլանի միջոցով	հատ	-	2
Նախագծի և փաստացի կառույցի էներգետիկական հաշվարկ և սերտիֆիկացման աշխատանքներ	հատ	-	1
Անֆալտբետոնե խառնուրդի ստուգում	շերտ	-	1
Անֆալտբետոնե կեղևների փորձարկում	հատ	-	1

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԶԱՆՖԻԴԱՅԻ Է. ԴԱՇՏՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի
ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՅԼԻՃԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԵՐԻ ՊԼԱՆ**

Հողային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծառալաթերթի ծավալ	Ըստ շերտերի
1	2	3	4
Գրունտերի հետիցքի տոփոնման աշխատանքների հետ կապված լաբորատոր փորձարկումներ	մ³	1402	20
Կոնստրուկտորական մաս Մասնաշենք 1.1			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծառալաթերթի ծավալ	Փորձարկումների քանակ (բետոնի համար, յուրաքանչյուր 50 մ³ - ի հիմքերի համար, յուրաքանչյուր 20մ³ մյուս կոնստրուկցիաների համար, 4 նմուշ 40 սմ երկարությամբ, ամեն տրամաչափի ամրանի համար, շին հրապարակ առաքված յուրաքանչյուր չափաքանակից
1	2	3	4
Միաձուլյի հիմնային հեծան -2.100 կիշ			
Բետոնե նախապատրաստական շերտ B7,5 բետոնով	մ³	6.6	1
Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	30.20	1
Ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20բետոնով	մ³	32.3	1
Ամրան Φ18 A500c	տ	1.593	1
Ամրան Φ8A240	տ	1.020	1
Ե/բետոնե հատակ -0.05 կիշ			
Ե/բետոնե հատակի իրականացում B12,5բետոնով	մ³	16.9	1
Շրջանակ Ա.Բ.Գ.Ե. 1,2,3 առանցքով			
Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ³	8.8	1
Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ³	18.4	1
Ամրան Φ18-20 A500c	տ	2.486	2
Ամրան Φ8A240	տ	1.085	1
Ծածկի սալ +3.180 կիշում			

Ե/բետոնե սալի իրականացում B25 բետոնով	մ³	27.9	2
Ամրան Φ10A500c	տ	1.15	1
Ամրան Φ8A500c	տ	0.73	1
Ամրան Φ8A240	տ	0.15	1
Կոնստրուկտորական մաս Մասնաշենք 1.2			
Միաձուլյ հիմնային հեծան -2.100 նիշ			
Բետոնե նախապատրաստական շերտ B7,5 բետոնով	մ³	21	1
Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	58	1
Ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20բետոնով	մ³	106.20	2
Ամրան 18-22ΦA500c	տ	7.60	2
Ամրան Φ8A240	տ	2.90	1
Ե/բետոնե հատակ -0.05 նիշ			
Ե/բետոնե հատակի իրականացում B12,5բետոնով	մ³	63.9	2
Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	5.9	1
Այլ լաբորատոր փորձարկումներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Ծառաթերթի ծավալ	Փորձարկումների քանակ
